



ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

ԺԲ. ՏԱՐԻ ԹԻԻ 34

✻ ՀԱՐԱՐ ✻

19 ԱՊՐԷԼ 1908

ԱՅԼՍԵՍՏՈՐՈՐ ԵՄԻՆՈՐՈՐՈՐ

ԶԵՆԻԹ

ԱՅԼՍԵՍՏՈՐՈՐ ԵՄԻՆՈՐՈՐՈՐ

ՄԻԱԿ ՆԵՐԿԱՑԱՑՈՒՑԻԶ]

Գ. ՍԱՐԳԻՍՈՖ ԵՒ ԸՆԿ.


Պաշտ-Դարու, Օռոդտի-Պաք հաստատութեան գէմ, Թիւ. 16

Հատը 40 փաքա

(Տ. Ասադուրյան) شرکت مطبوعه — باب عالی جاده سنده نومرو ۵۲

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԱՍԱՏՈՒՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պապը-Ալի հաստատութիւն Թիւ 52



Ձեռքի, ոտի ու ոտի եւ ձեռքի
փխմանաման մեքենաներ
կը գտնուին

Անկարելի է որ ընտանիք մը առանց կորի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղաւկի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

Ս Ի Ն Կ Է Ռ

ՀԱՅԺԱՅԻՐԻՑ ԿԱՅԺ. ՊԱԼԱՏԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



մեքենան լաւագոյն է. սոյն մեքենան ամենէն կտորի լագործուածը, հաստատունը եւ դիւրագործելին ըլլալուն բավարարող աշխարհի

ձեռքի ամէն մարդ Սինկերի մեքենան կը գտնէ:

Սինկերի մեքենաները կը ծախսին մի միայն Սինկեր Ընկերութեան լաւագոյն գէշ:

ՏԱԲԺԹԱԿԱՆ ՄԱՍՆԱՎԱՅՐՈՒՄՆԵՐ	ԲՆՐԱ	(1. Մեծ փողոց, Պօն Մարշէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին .
		(2. Մեծ փողոց, Կալաթա Մէրայի Լիսէին դէմ.
	ԿԱԼԱԹԱ	(1. Սինկեր խան, Թիւնէլի ետեւը.
		(2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ.
	ՊՈԼԻՍ	(1. Սուլթան համամ .
		(2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13 .
	ՍԵԻՏԱՐ	Չարշը Պօյաւ, թիւ 120 .

Կասարեալ երաժիշտութիւն

Մասնաճիւղեր գաւառներու բոլոր ֆաղափներու մէջ:

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, թիւ 343 եւ 343 կրկին, Տիւղօղլուի տունը:



ԱՐՏԻԵԼՔ ՕՐԱ-

ԹԵՐԺ ազգային, գրական եւ ֆաղափական :
— Բաժանորդագրութիւն՝ տարեկան 4. Պոլսոյ համար 80 դրշ. վեցամսեայ 45 դրշ. գաւառներու համար տարեկան 108 դրշ. վեցամսեայ 60 դրշ. և օտար երկիրներու համար տարեկան 35 ֆր. վեցամսեայ 20 ֆր. Ձեռքէ վաճառում՝ քսար փառա: ԱՐՏԻԵԼՔ հրա լարակ կ'եղէ ամէն օր, կէս օրին, խընաւեալ բովանդակութեամբ, ընտիր յօդուածներով, թարմ լուրերով ու նորագոյն տեղեկութիւններով:

ԱՐՏԻԵԼՔ, իր վերակազմուած խումբագրութեամբ և իր կարող աշխատակիցներ

բով, առաջնակարգ տեղ մը կը գրաւէ տեղական հայ մամուլին մէջ:

Իր առաւելութիւններէն մէկն է ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԸՄԿՐՈՒ ՀԱՆՁԱՄԱՆՔԸ, որով իր ընթերցողներուն կը ներկայացնէ պարբերաբար: Մանօթ Դէմքեր և Էրբեմն ալ տեսարաններ: Ոչ նուազ կը գնահատուին իր մասնագիտական յօդուածները, եկեղեցական, կրօնական, տնտեսական-սեղանաւորական, երկրագործական, իրաւաբանական եւայլն. բաց ի գրական, բանասիրական գրուածքներէ, օրուան տեսութիւններէ եւայլն:

ԱՐՏԻԵԼՔի վերաբերեալ ամէն գրութիւն ու բաժանորդագիրն ալ տք է ուղղել Տէր և Տնօրէն Գարեգին էֆ. Պօյաճեանի հասցէին, Ղալաթիա, Մահմուտիէ Ճատտէսի, ուր հաստատուած են թերթին ապարանն ու խումբագրատունը:



ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ — ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

ԺԲ. ՏԱՐԻ ԹԻԻ 34

ՇԱՐԱԹ-

19 ԱՊՐԷԼ 1908

ԶԱՏԿԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

«Զատիկն ալ անցաւ» կըսեն այսօր ընտանիքի հայրեր և ամէն անոնք՝ որոնք բազմաճիւղ ընտանիքի մը հոգը, բեռը ունին կոնսակնին, այնպիսի շեշտով մը, որ կարծես մեծ վտանգ մը անցուցած ըլլալին և մաղապուր աղատած՝ փոթորիկէ մը:

Թերեւս ձենէ շատերուն անբնական երեւոյթ խօսքը որ մէջ կը բերեմ, քանի որ Զատիկ, Տաղաւար, խինդ ու կերուխում, խոտոր կը համեմատին վտանգին, փոթորկին հետ: Բայց տեսէք թէ ճշմարտութիւնը և իրաւունքը ուրկէ դուրս պիտի գայ:

Իրտուած է որ մէն մի ընտանիքի հայր կամ պետ, մէն մի տաղաւարի, մասնաւորաբար Զատիկն, ստիպուած է խանգարել պիւսճեան և կամ եթէ չի խանգարէ իսկ, մատնուիլ այնպիսի բացառիկ ծախքերու՝ որոնք ապրուստի սովորական և անհրաժեշտ նիւթէ ունեւերէն դուրս են, բոլորովին օտար:

Տանը մէջ ամէն ոք իր օրուան ու պա-

հետի հագուստը կապուստը ունի, այնպէս չէ՞, ո՛ւր տեսնուած է որ մէկը մերկ պտըտի և կամ բարեկեցիկ մը որ ցնցոտիներով տեսնուի, բայց ատով չի լմննար, Զատիկին պէտք է նոր գնումներ ընել, նոր ծախքերու մատնուիլ: Եւ տան տիկինին գլխարկի փետուրէն մինչև սպասուհիին չափքը եազման:

Ամէն կիրակի եկեղեցի գացողներ քիչ չատ պնակները կը հովուեն, և ըստ կարողութեան կը նուիրեն իրենց քիչը թէ շատը, բայց Զատիկն մասնաւոր վճարումներ կան, իւղագին և կարգ մը քաղաքներ զորս համարելու համար թուղթ մատիտ սմհրածեշտ է:

Ամէն ոք իր կարողութեան չափով աղքատին կօգնէ, բայց Զատիկն յատուկ նուիրատուութիւն մը կայ տնանկ աղքատաց ... որ պարտաւորիչ է:

Ամէն կոկիկ մայր կամ կին, իր զաւկին հիները աղքատիկ տղայոց տալու բարի սովորութիւնը ունի կարծեմ, բայց Զատիկն,

յատկապէս վճարում մը կայ զգեստաշինութեան յատուկ նուիրատուութիւն մը, որուն հարկ անհրաժեշտ է մասնակցիլ իրեն թաղեցի:

Ճամբան շատ անգամ կարելի է հանդիպիլ ժամկոչներու, որոնք կանցնին կը դառնան և որոնց պարզ բարեւ մը տալով կըրնայիք անցնիլ, բայց Ձատկին երեք օրը հանդիպած ժամկոչներնուդ առանց ինքնաբոլի նուէրի չէք կրնար հիւսիս հարաւ նայիլ, և ըստ աւանդական սովորութեան, ձեռքերնիդ զրպաննիդ տանելով պէտք է գոնացում տաք ծուռ ճիւղ և խնդում երես աղբարիկներուն:

Հագուած շքուած տարին անգամացու վիզիքներ ունիս հոս հոն, գիւղիդ մէջ կառքերը սովորաբար հինգ զրուչի զքեզ եղիա մարգարէին պէս ամպերուն մէջէն կը տանէին, բայց Ձատիկ է, կառապանը անտարբեր կը մնայ խնդրանքներուդ դէմ, երբ կուզես նոյն վճարումը ընելով՝ ազատիլ ոտքիդ կոշտերը բորբոքող սեղմ կոշիկներէդ, կրկինը, եռապատիկը և քառապատիկը կուզէ մարդուկը և ... կը վճարես:

Եւ ի վերայ այս ամենայնի՝ չա՛թ դուռը ... ո՛վ է ... բաղնիքի ուսան, որ փոխան մէկ զրուչի՝ չորս ժամ չարունակ կը լուար տանըդ ամբողջ էգ անգամներուն գըլուխը, բայց, Ձատկի առթիւ բացառիկ նուէր մը կսպասէ և ատոր համար եկած նստած է հող, և որ սանկ ու նանկ բանով չերթալու հաստատ որոշումը տուած է ինքնիրեն:

Եւ քանի որ կանանց վրայ եկաւ խօսքը, կրկնել հարկ չիկայ, կարծեմ դուք ամէնքդ գիտէք թէ քանի՜ փուճ ու սին ծախքերու մատնուեցաք Ձատկի առթիւ, քանի՜ ոսկիներ զրիք կանացի փափուկ ձեռքերու մէջ, երկաթէ դրամարկղներու յանձնուելու համար փոխան գունագեղ և վաղանցուկ թուալէթին ...:

Ծախք, ծախք, ծախք, ամէն օր ամէն վայրկեան, ամէն քայլափոխի, անգադրում, անվերջ ... անտանելի: Դրամ, տանը մէջ դրամ, եկեղեցին դրամ, փողոցը դրամ, դըրամ, դրամ, դրամ, և ինչո՞ւ, որովհետեւ Ձատիկ է: Չեմ գիտեր թէ Ձատիկին և ծախքին մէջ ի՞նչ խնամութիւն, ի՞նչ սերտ յարաբերութիւն մը կայ որ զիրար կը քաշեն:

Այսու հանդերձ, միշտ նախապաշտել է նորը, մաքուրը, բայց երբ ասոնց մէջ *abus* կը մտնէ, որ ըսել է չափազանցութիւն, այն ատեն, ուղղոյն ալ անտանելի կը դառնայ, տուողն ալ:

Գիտէք թէ տարիներէ ի վեր սովորութիւն եղած է կարգ մը՝ «փոխան»ներ, որոնց հասոյթը կը յատկացուի բարենպաստակ հաստատութիւններու, արդ, կարելի չէ՝ արդեօք, Տաղաւարի առթիւ «փոխան այցելութեան»ին կցել նաեւ «փոխան բացառիկ ծախուց» նուիրատուութեան մը, որ իր սահմանափակ իսկութեան մէջ՝ թէ տուողին համար *benefit* և թէ ընդունող հաստատութեան մեծ զարկ մը պիտի կրնայ ըլլալ:

Ատենէ մը ի վեր կը նշմարուի որ, Տաղաւարները, որոնք աղօթքի ձեսի և կրօնական պաշտամունքի սրբազան օրեր էին, այսօր առեւտուրի է՛ն բարեպատեհ միջոցները և առիթները դարձած են, և հիմա Տաղաւար ըսելով կիմանանք բթամատին և ցուցամատին անվերջ չարժուածը, տալ, վճարել, չըլլայ նէ ճարել, ու մատնուիլ բացառիկ ծախքերու, բացառիկ հաշիւներ բանալ և զանոնք գոցելու՝ հաւասարակշռելու համար ցնցուիլ տարուոյն բոլոր ընթացքին մէջ:

Վաղը նոր կիրակիին, թող ամէն ընտանիքի հայր, զբօսանքի համար թուղթ գրիչ առնէ և հաշիւի նստի, այն ատեն միայն պիտի տեսնէ մեր յօդուածէն քաղելիք բարոյականը, որ գոյացած թուանշաններուն մէջէն դուրս պիտի գայ: Եւ այն ատեն պիտի տեսնուի թէ Աստուածորդին որ մամոնան կատեր, իր ՅՍՐԵԱԻը քանի՞ վ տօնուեցաւ...

Վ. ՓԱՓԱՋԵԱՆ

Ձ Ե Կ Ո Յ Ց

Անգամ մ'ալ հարկ կը տեսնանք զեկուցանել թէ՛ Ատաբաղարի համար թերթին գործակալ ունինք Ազն. Սարգիս էֆ. Խաչուկեանը, և Իզմիտի համար՝ Ազն. Արամ Չաքմաքեան էֆէնտին, որոնց պէտք է դիմել քաժանորդագրուելու համար Հանրապետական:

ԳԼԽՈՒՍ ԵԿԱԾՆԵՐԷՆ



Հանրագիտակի Զազան չե՝

Թէեւ շատ տարիներ անցած են անկէջ ի վեր, սակայն այսօրուան պէս միտքս է թէ Մայիսի հեշտաբոյր իրիկուն մըն էր. իրիկ- նամուտի ոսկեգոյն շողերը կը կաթկթէին ծա- ուերուն տերեւներէն, արեւը կամաց կամաց կանհետանար լեռներէն, վարագոյրին ետե-ւէն, ծաղիկները . . . : Օ՛հ, եթէ սա վայր- կեանիս չանդրադառնայի, անդալաբար թող պիտի տայի գրչիս, որ նկարագրէր ձեզի Մա-յիսի իրիկուն մը: Պարապ բան չպիտի՛ ըլլար: Մայիսի իրիկուն մը, Մայիսի իրիկուն մըն է՝ որուն հմայքին վրայ բան մը չի կրնար աւել- ցընել ամենէն խանդավառ երեւակայութիւնը գրագէտներու լաւագոյնին:

Ուրեմն առանց բանաստեղծի, գրագէտի հովեր առնելու, թող տուէք որ սովորական մահկանացուի պէս ըսեմ թէ այն իրիկունը ուր այս պատմութիւնս կ'սկսի, Մայիսի իրի-կուն մըն էր, ամեն Մայիսի իրիկուններուն պէս:

Իով քովի նստած էինք Զազա և ես, հոն ծովեզերքը ուր եկած էինք մեր լողան-քը ընելու:

Աղեքսանդրիոյ արուարձանները կազմող ծովեզերեայ գիւղերուն ամենէն աղւորը և ամենէն աշխարհիկն է Պուլքէյ, ուր երկու-քըս ալ կը բնակէինք ամառները:

Այդ գիւղերու շարքը կազմող Ռամլէի մէջ սովորութիւն է որ կիները և էրիկ մար-գիկ, խառն, միասին ընեն իրենց ծովի լո-գանքը, ինչպէս կ'ընեն Եւրոպիոյ բոլոր plage-ներուն մէջ:

Եւ հովուերգութիւն մը երգելու համար ամենէն յարմար վայրն էր Պուլքէյի այդ ծո-վախորշը որուն եզերքը տեղաւորած էինք մեր ծալաթոռները:

Գարունը, ետեւի պարտէզներէն եկած թուրմունքները, ծովին աղի սիւքը, տիրող լռութիւնը, վերջալոյսի խորհրդաւորութիւնը, չեմ գիտեր ինչ ազդեցութիւն ըրին վրաս, . . . Ժամադրեցի սիրտս բանալ իրեն ցուցնելու

համար այն վերքերը՝ զորս հոն բացած էին իր հրացայտ աչքերուն սլաքները: Երեք տա-րիէ ի վեր զարմանալի, թագուն, ընդհատ սիրով մը կը սիրէի զինքը առանց քաջու-թիւնը ունեցած ըլլալու սիրոյս խոստովա-թիւնը ընելու իրեն երբէք:

Գուցէ աչքերս խօսած էին և աղաղակած իրենց ամբողջ փափաքը. բայց անգութը, պաշտելին Զազա, ո՛վ գիտէ ուշադրութիւն անգամ չէր ըրած թերեւս, որովհետեւ իր պարկեշտ կնկան ընթացքէն կը տեսնէի թէ հոն տեղուանքը ըլլալու որ եւ է դիտաւո-րութիւն չունէր, քանի որ երբէք չէր վախ-նար հետս մինակ մնալէ, անշուշտ զիս շատ յարգալիր, շատ վստահելի բարեկամի մը տեղ դրած ըլլալուն համար:

Երբէք կարեւորութիւն չէր տուած պա-ղատող նայուածքներուս, ձեռքի փնռուած հպումներուս և գողունի քրտուրտութնե-րուս:

Իր պարզ միամտութեան մէջ չէր զգար, չէր տեսներ անշուշտ դաւերը՝ զորս սիրա-հարները կը լարեն մոլծանելու, փորձելու հա-մար կնկան մը հոգեակը՝ վեհագոյն ժամուն համար պիտանի հնարքները բանեցնելէ առաջ:

Խելանի սիահարները արտորալու պէտք չունին և գիտէն առածը որ կը պատուիրէ կամաց քալել ապահով ընթանալու համար, և ահա ինչու չեն շտապեր, և կը յառաջա-նան զգուշութեամբ, քայլ առ քայլ, և թըռ-չուններուն փնտռած տաք և փափուկ անկո-ղինը պիտի ըլլայ:

Բայց ստէպ ալ կը պատահի, աւա՛ղ, որ մեր այս զգուշաւոր ընթացքին մէջ կէս ճամ-բան կը մնանք և երջանկութիւնը շատ հե-ռուէն զգալի կ'ըլլայ մեզի, այն ալ պատ-րանքներու յօշոտող կրկներեւոյթի մը մէջ միայն:

Այդ իրիկունը սակայն միտքս դրի աւելի յանդուգն ըլլալ . . . : Առիթը, փորձութիւնը, ցանկութիւնը, այդ ընդհամարուած մտերու հրապոյրը, — այնքան բարակ հագուած էր — այս ամենը քաջութիւն մը տուին ինծի որ ամեն բան աչքս առնեմ:

Իր հովանոցին ծայրովը խենդ պատկեր-ներ կը գծէր աւագին վրայ: Հովանոցը իրմէ առնելու պատրուակին տակ ձեռքը ձեռքիս

մէջ առի և տեսայ թէ չէր քաշեր ձեռքը, ընդհակառակը մատները մատուցներուս կը փաթթուէին: Ողնաշարիս մէջ, վերէն վար ցնցում մը զգացի:

— Օ'հ, ձեռքերդ ինչ պաղ են, մրմնջեց կրկին անգամ սեղմելով մատներս, արդեօք հիւանդ ես:

— Հիւանդ ... ահ, ապուշ խօսքը:

— Բայց կը դողաս կոր, տաքութիւն ունի՞ս:

— Թերեւս:

— Շուտ տուն երթանք, անքիբիբին ու Նիմ, քաշէ մը տամ քեզի:

— Դեղս անքիբիբինը չէ:

— Կը կարծե՞ս:

— Ապահով եմ: Երեք տարի է որ ջերմ ունիմ, Ձազա:

— Երեք տարի, կատակ կընես կոր, ընդհակառակը միշտ քաջառողջ տեսած եմ զքեզ:

— Սրտի ջերմերը, Ձազա, շատ աւելի վտանգաւոր են, որովհետեւ միշտ պահուած կը մնան:

— Սրտի ջերմ ունի՞ս, դո՞ւն:

— Ձե՞ս հաւտար, ձեռքդ սրտիս վրայ դիր և տե՛ս ի՞նչ սաստիկ կը զգարնէ կոր:

— Իրաւ, բայց բծիչկի՜ չերթա՛ս:

— Ո՛հ, ինչո՞ւ վրաս կը խնդաս Ձազա:

— Վրադ խնդամ, ինչո՞ւ, բայց այս իրիկուն բան մը կըլլաս կոր:

— Իրաւունք ունիս, ես ալ չեմ գիտեր թէ ի՞նչ կըլլամ կոր, ընդհանրապէս մարդիկ ինքզինքնին կը կորսնցնեն, ապուշ բան մը դառնան երբ ... երբ կը սիրեն:

— Ինչպէ՞ս:

— Ոչինչ:

— Ձէ՛, չէ՛, կուզեմ հասկնալ, շարունակէ:

— Այո՛, կըսէի թէ մարդս ծաղրելի, ապուշ կը դառնայ՝ երբ կը սիրէ:

— Բայց ոչ միշտ:

— Ուրեմն, Ձազա, կը կարծե՞ս թէ ...

— Այո, կը կարծեմ թէ այս իրիկուն քիչ մը հիւանդ ես: Եւ իրաւ, ըսէ, սէ՛րն է որ քեզ անհանգիստ կընէ:

— Սէրը, Ձազա, սէրը:

— Բաղդաւոր ես որ ինծի պէս ճշմարիտ

բարեկամութիւն մը քով կը գտնուիս այս պահուս, փոխանակ անոր հետ ըլլալու և գուցէ...

— Որքան անգուր լի ես:

— Գոնէ գեղեցիկ է:

— Հիանալի, պաշտելի, սքանչելի ...

— Կը ճանչնամ զինքը:

— Այո՛:

— Ո՞վ է, ըսէ տեսնեմ:

— Ձեմ համարձակիր կոր, տես:

— Ո՛հ, խեղդութիւնը ձգէ, ինձմէ՞ պիտի պահես, ըսէ տեսնեմ, այդ չքնաղ արարածին անունը:

— Բայց ...

— Ըսել է վրաս վստահութիւն չունիս, չար: Տե՛ս, մարդ չկայ, գիշեր կըլլայ կոր, այս մութին մէջ մի քաշուիր, ըսէ:

— Քանի որ կուզես գիտնալ, լաւ, դուն ուղեցիր: Այն պաշտելի, հիանալի արարածը զոր կը սիրեմ, մեռնելու աստիճան, այդ արարածը ... դուն ես, Ձազա:

— Ե՛ս, հաւատալիքս չի գար կոր, երեք տարի է ահա որ գիրար կը ճանչնանք, հիմայ միտքդ ինկաւ, այդ անակնկալին չէի սպասեր, հաւատա՛: Ես գիտեմ թէ զիս երբէք չես սիրած, չես ալ սիրեր. այս իրիկուն սաւ կայն քիչ մը օդէն, քիչ մը տեղէն, քիչիկ մըն ալ չարածձի գարունին ազդեցութեան տակ, խեղճիդ բաներ մը կը փչէ և դու քեզի կըսես « քովինս մանկամարդ կին մըն է, ոչ աւելի գեղեցիկ և ոչ նուազ ուրիշներէն, ձեռքիս տակն է ահա, և ասանկ աղւոր իրիկունով, այդ գեղեցիկ առիթէն չօգտուելու համար, խենդ ըլլալու եմ » . — սիրելի բարեկամ, բայց ատանկ անցողակի սէր մը... յագեցնելու համար, անծանօթ, ոչինչ կին մը գտնելու էիր և ոչ թէ բարեկամութիւն մը, որ բարեկամիդ ալ կինն է:

— Ձազա, հոգիս, սրտիս դիցուհին, հաւատա ինծի, տե՛ս ծնրադիր կաղաչեմ, հաւատա որ երեք տարիներէ ի վեր խենդի պէս կը սիրեմ զքեզ, աչքերուս մէջ չի կարդացիր ասիկայ:

— Նախ, հանդարտէ, վար առ ձեռքերդ և մտիկ ըրէ ինծի, անկեղծ պիտի ըլլամ և ճշմարտութիւնը պիտի ըսեմ քեզի:

Շատ ուշ կարթննաս կոր, բարեկամ, և յանցանքը իմա չէ ... Անցեալ տարի, կը

յիշեալ, չար, partie de plaisir մը ըրինք Մէքս: Արդէն գուշակած էի թէ անտարբեր չէիր իմ մասին, աչքդ շարունակ աչքիս մէջ էր և ուրիշներէ՝ տարբեր կերպով կը սեղմէիր ձեռքս, — Զաղա, ուշադրութիւն ըրէ՛, կըսէինք զինքնքիս, պարոնը սիրահարած է քեզի —:

Մինչ այս մինչ այն, կը հասնինք partie de plaisir թուականին: Այդ օրը, յատկապէս, բոլոր կանացի հնարամտութիւնս թափած էի, սովորականէն աւելի գեղեցիկ, աւելի հրապուրիչ, աւելի չիք երեւնալու համար աչքիդ: Զիս տեսնելուդ պէս մօտեցար ինծի և ահա complimentներու ողողում մը: Toilette իր effetն ըրած էր. ուրախ էի: Մինչև կէս օր երգեցինք, խնդացինք, կերանք, խմեցինք, յաջողուած partie մըն էր: Ինչ որ դիտեցի սակայն — քանի որ տեղն եկաւ, ըսե՛մ — փոխանակ ուշադիր ըլլալու իմ քաջաւերով շարժուկացքիս, փոխանակ շարունակ ընկերութիւնդ փնտռելուս, փոխանակ խրախուսող ժպիտներուս և նայուածքիս, մինչև վերջը կը դառնայիր Օրիորդ Մ...ի, այդ չորրորդ աղջկան քղանցքներուն շուրջը, անոր համար էին կեռամներուն ամենէն կարմիրը, բաժակներուն ամենէն մաքուրը, լաւագոյնը ծաղիկներուն: Եո միջոց մըն ալ, աչքովս տեսայ, աղբիւրին ետեւը, գաղտագողի, ձեր չրթունքները իրարու քսուեցան: Գլխի պտոյտ ունեցայ այդ վայրկեանին, սիրտս պիտի պայթէր, թալուկ եկաւ վրաս, և գետինը ինչպէս մարեցայ: Ամենքդ գըլուխս ժողուեցաք, և կարծեցիք թէ աբեւազարկ եղած էի: Ինչ որ կարելի էր ըրեք զիս սթափեցնելու համար: Կը յիշեմ որ դու էիր որ ձեռքերս կը չփէիր, մինչ ամուսինս ջուր կը սրսկէր երեսին:

Ըրածս պարզապէս comédie մըն էր խանգարելու համար այդ հաւաքումը, որու մէջ ամեն ոք, ինձմէ զատ, իր հաճոյքը կը գըտնէր: Ամուսինս Տիկին Մ...ի հետ կը սիրաբանէր, մի եւ նոյն բանը կընէին Պ. Բ... Օր: Յ...ի հետ, և դու ալ՝ այդ լըրճուկին հետ: Համբերուելիք բան չէր: Յանկարծ փափաք յայտնեցի տուն դառնալու: Ամուսինս անպատշաճ կը գտնէր այս դիտաւորութիւնս և կը պատուիրէր որ մնամ, քանի որ հրաւիրեալները մերն էին:

Ականջ չի կախեցի սակայն և պնդեցի որ տուն դառնամ: Մէկը պէտք էր սակայն որ ինծի ընկերանար: Ամուսինս միամտութիւնը ունեցաւ քենէ խնդրելու որ այդ յոգնութիւնը դուն յանձն առնես: Ուզածս ալ այդ էր: Ուրախութենէս վեր վեր պիտի ցատկէի: Վերջապէս մինակ պիտի մնայի քեզի հետ կառքին մէջ և տունը մարդ չկար... Ներողութիւն խնդրեցի հրաւիրեալներէս և խեղդի պէս կառքին մէջ նետուեցայ: Անգամ մը որ դռնակը գոցուեցաւ և կառապանը ձիերը մտրակեց, լայն շունջ մը առի: Այդ վայրկեանին ամեն բանի պատրաստ էի: Բայց կերեւայ թէ այդ օրը ջերմ չունէիր, ապա թէ ոչ աւելի ուշադիր պիտի ըլլայիր և պիտի տեսնէիր թէ սիրտս ուժգին կը զարնէր, կրակ կը ցայտէր աչքերէս և քեզի կը չփուէի բարձիկներու կռնակովին քսւողոտող կատուներուն պէս: Բայց կերեւայ թէ խելքդ միտքդ Օր: Մ...ի հետ էր:

Ամեն բան աչքս առած էի և կապառէի որ թեւերդ բանայիր անոնց մէջը առնելու համար զիս: Մինչև տանս դուռը առաջնորդեցիր զիս պաղարիւնութեամբ մը և պարկեշտութեամբ մը զոր մինչև այսօր ներքէնմ կրցած քեզի: Կառքէն վար իջած պահուս կառապարկեմ միասին վեր ելլալ գաւաթ մը թէյ առնելու համար: Հրաւէրս կը մերժես և ամենայն քաղաքավարութեամբ կը սեղմես ձեռքս:

— Մնաք բարով, Տիկին:

— Երթաք բարով, Պարոն...:

Այս, պարոն, ատանկ առիթներ ամեն օր մարդուս ձեռքը չեն անցնիր: Օգտուել չի կրցաք, յանցանքը որունն է: Ռօման մը պատրաստած էի, որուն հերոսը չուզեցիք ըլլալ և հիմայ հոս, բաց օդին մէջ, աւազներուն վրայ... ջերմդ կը բռնէ և...:

Այդ պարբերութիւնը չաւարտած ոտքի կելլէ, դէմքին voiletteը կիջեցնէ և քղանցքները ծողուելով կը պատրաստուի մեկնելու:

— Զաղա, կաղաչեմ կեցիր վայրկեան մը եւս, մի հեռանար...:

Հովանոցը կը ճօճէ օդին մէջ և հեգնական ժպիտով մը երեսին կը նետէ սա բառերը:

— Երկաթը տաք եղած ատենը կը ձեռնէ:

Ժամէ մը աւելի գամուած մնացի նստած տեղս և սկսայ մտածել: Ինչ հանելուկ է կինը: Պարապ տեղը միտքս երկար ատեն յոգնեցնելէ ետքը, վշտաբեկ սրտով տանս ճամբան բռնեցի, սա խրատը ականջիս օղբնելով թէ «երկաթին պէս, կինը տաք եղած ատենը... սիրելու է»:

ԳԻՒՂՆԵՐԸ

Գ Ն Ա Լ Ը

Գնալը կղզին կղզի մըն է:

Ասիկա ամէն մարդ գիտէ:

Գնալը կղզին երթալու համար անպատճառ պէտք է շոգենաւ կամ նաւ նստիլ:

Կարելի չէ՝ քալելով Գնալը կղզի երթալ:

Գնալը կը կոչուի Գնալը կղզին, որովհետեւ քրնա քսած է իր չորս դին:

Գնալը կղզին երբէք իրաւունք չունի առնուելու, երբ «կէշմիւրի...» եւայլն անուանենք զինքը:

Աքանչելի քար եւ փառաւոր ժայռ կ'արտադրէ Գնալը կղզին, եւ ինչ որ զարմանալի է, բացի քարէ ու ժայռէ, երբեմն... մարդ ալ կը հասցնէ:

Գնալըի օդը ա'յնչափ գեղեցիկ է որ մարդ երբէք չի մեռնիր հոն, ահա՛ թէ ինչո՞ւ այս տարի երկու մեռել միայն ունեցաւ ամբողջ, ուրախալի պարագայ մը, որուն համար շատ կը գանգատի տեղւոյն քահանան:

Գնալըի մէջ ամէն ինչ մենաշնորհուած է եւ մէկ հոգիէ աւելի՝ մի եւ նոյն գործը ընող չէք կրնար գտնել:

Տէրտէրը մէ'կ հատ է, եկեղեցին՝ մէ'կ հատ, վարժապետը՝ մէ'կ հատ, տիրացուն՝ մէ'կ հատ, թատրոնը՝ մէ'կ հատ, սափրիչը՝ մէ'կ հատ, զարգալաթքին՝ մէ'կ հատ, հացագործը՝ մէ'կ հատ, կաթնալաճառը՝ մէ'կ հատ:

Արդէն եթէ երկու ըլլան, կարելի չէ՛ որ կարենան ապրուիլ:

Երբեմն երկրորդ հացագործ մըն ալ կը ջանայ մրցիլ գեղին միակ հացագործին հետ եւ փուռ մըն ալ ինք կը բանայ իր կարգին, բայց շատ չանցած կը ստիպուի գոցել, որովհետեւ երկու փուռ մէկանց կարելի չէ որ եփելիք բան գտնեն եւ ո'չ ալ կշտացնելիք մարդ:

Եւ ա'յնչափ առաջ գացած է այս մենաշնորհները, որ տեղւոյն լուսօրոյնութիւնը անգամ մենաշնորհուած է: Մէկ հատ լուսօր ունի ամբողջ Գնալը կղզին:

Ըսի որ զիւրաւ մարդ չի մեռնիր Գնալը կղզին մէջ:

Այս ըսածս ա'յնչափ չիտակ է որ ո եւ է բժիշկ չէ կրցած բնակութիւն հաստատել հոն:

Անգամ մը բժիշկ մը փորձեց, ինչպէս կը պատմեն կղզեցիները հին հէքեաթի մը նման:

Շարաթ մը անցաւ, երկու շարաթ, ամիս մը, երկու ամիս, վեց ամիս... եւ զինքը կանչող չկար:

Խեղճ բժիշկը ճարահատ մնացած էր, եւ կ'անիծէր... օղին գեղեցկութիւնը, որ տոբթորութիւն կ'ընէր՝ իր հացը չորթելով:

— Եղբայր, հարցուց անգամ մը իր տեղացի մէկ քարեկամին, հոս մարդիկ արդեօք չեն հիւընդնար երբէք:

Բարեկամը խնդաց:

— Այս գիւղին մարդիկը մանուկ կըլլած են, սիրելի'ս, գլխու ցաւ անգամ չեն ունենար:

Խեղճ բժիշկը բուրդ ու բապուճ փախաւ գեղէն, հաստատուելու համար անա'նկ տեղ մը ուր մարդիկ գոնէ ատեն ատեն յիշէին... հիւընդնալ, բժիշկներու քսակը չէնցնելու համար:

Մանկաբարձ ալ գոյութիւն չունի Գնալը կղզին, որովհետեւ հոն տեղի կ'ինքը զաւակ բերելու համար մանկաբարձի չեն կարօտիր:

Գնալըի օդը — սքանչելի մանկաբարձ մը — ա'յնչափ գեղեցիկ է որ հոն կ'ինքը առանց մանկաբարձի օղնութեան, մինակնի'ն աշխարհ կը բերեն զաւակին:

Եւ ահա՛ այս պատճառաւ դեղագործ ալ չկայ Գնալը կղզին:

Բոլոր դեղագործները եկած են, խառնութ բացած են եւ... մնանկացած:

Այս օրերս դեղագործ մըն ալ պիտի գայ եղեր հաստատուիլ, — տեղացիները շատ կը մեղքնան կոր խեղճ մարդուն վիճակին եւ փառանքուն վրայ:

Գնալը կղզին բնակիչներուն է'ն մեծ ժամանցն է... թաղականի կոիւնները:

Երեք թաղական ունին բովո՛ւ բովո՛ւ, բայց երե՛ք հազար տարի կրնան թաղականի վիճարանութիւն ընել՝ առանց որոշելքի մը հասնելու:

Դպրոց մը ունին, ուր հազիւ 20-30 տղայ կը յաճախեն, բայց Գնալըի դպրոցը աւելի դժուար է կառավարել՝ քան թէ աշխարհիս է՛ն մեծ համալսարանը:

Գնալըի ժամը շատ կոկիկ երեւոյթ մը ունի, սքանչելի տեսարան մը ունի, պատերը աղուոր կապոյտ գոյն մը ունին, դրանք առջեւ նոր սալայատակ մը ունի, պարտէզին մէջ չամի ծառեր ունի, նոյն իսկ զանգակատուն մը ունի, բայց ... դպիր չունի:

Հանդիսաւոր օրեր դպիր գտնելու համար քիլլալ կը հանեն գիւղին մէջ:

Եւ ա՛յնչափ զգալի է դպիրի պակասութիւնը, որ դեռւատի օրիորդներ շապիկ կը հագնին և շարական ու Աւետարան կը կարդան:

— «Հայ. Եկեղեցիին օրէնքները կ'արտօնեն», հարցուցի տեղացի մէկ բարեկամս, «աղջիկներու Աւետարան կ'արդալը»:

— Հայ. Եկեղեցին այդ մասին ոչի՛նչ կ'ըսէ, պատասխանեց բարեկամս:

Բանի որ Հայ. Եկեղեցին այդ մասին ոչի՛նչ կ'ըսէ, հետեւաբար կ'արտօնէ՛, — կը տրամաբանեն Գնալըցիները անշուշտ, և իրենց աղջիկներուն Աւետարան կ'արդացնել կուտան:

Եւ խոստովանեցէ՛ք որ գէշ սովորութիւն չէ՛, ընդհակառակը, խի՛ստ յանձնարարելի:

Ես որ ընդհանրապէս գլխուս վրայ Աւետարան կ'արդացնելու շատ մեքալը չեմ, ա՛մէ՛ն օր գլխուս վրայ Աւետարան պիտի կարդացնէի յօժարակամ, եթէ ... աղջիկներ ըլլային Աւետարան կ'արդացող:

Եւ ո՞վ պիտի ըլլար շահող:

Բարեպաշտութիւնը անտարակոյս:

Գնալըն սաիրիչ մը ունի, որ յաճախորդ չունեցած ատենը կը քնանայ, և որովհետեւ շատ յաճախորդ չունի, շարունակ կը քնանայ:

Այս սաիրիչը ժամանակին ճանչցած է Ֆասուլեաճեանը, Թրեանցին հետ նարտ խաղցած է, Չափրասարն հետ օղի խմած է...

Եւ որովհետեւ ինքը կ'ապրի, կը կարծէ

թէ՝ իր ատենին այդ մարդիկն ալ կը շարունակեն կոր ապրիլ բոլորը:

— Ի՛նչ լուր Ֆասուլեաճեանէն, հարցուց ինծի:

— Մեռաւ, պատասխանեցի:

Բերանաբաց մնաց:

— Հապա Թրեանցը ի՛նչ կ'ընէ կոր:

— Մեռա՛ւ, կրկնեցի:

Բերանաբաց մնաց նորէն:

— Է՛յ, Չափրասար ո՞ւր է հիմա:

— Անդիի աշխարհ, պատասխանեցի նորէն:

Մարդուն հաւատալը չէ՛ր գար կոր իր բոլոր հին ծանօթներուն մեռած ըլլալուն:

Գնալը կղզին ա՛յնչափ քիչ մարդ կը մեռնի որ, մարդուկս չէ՛ր հասկնար որ իր հին բարեկամները ի՛նչպէս մեռեր են:

Սիրաբանութիւնը Գնալը կղզիին մէջ ծընած և հոնկէ վերջ՝ աշխարհիս չո՛րս կողմը տարածուած է:

Միւս կղզիներուն մէջ չամերուն շուքին տակ կ'ըլլան Զիւրդները, հոս ... նայլ՛ք նայլ՛ք վառող արեւին տակ:

Միւս կղզիներու մէջ լուսինն է որ ընդհանրապէս վկայ կ'ըլլայ փոխանակուած սիրոյ երգումներու, այս կղզիին մէջ արեւը կը կատարէ լուսնին պաշտօնը:

— Թո՛ղ լուսինը վկայ ըլլայ իմ սիրոյս անկեղծութեան, կ'երգուենան ի Բրինքիթօ:

— Թո՛ղ արեւը վկայէ սիրոյս տաքութեանը, կ'ըսեն ի Բրօթի:

Գնալըի մէջ ծնած սէրերը մի՛շտ Գնալը կը մնան և երբէք միւշեւ Ազգ. Պատրիարքարան չեն երթար:

Հովանոցներու ետին փոխանակուած ի՛նչ համբոյրներ կը յիշէ Գնալըի լեռը: — Ո՛ հովանոցի քաղցր յիշատակներ ...:

Գնալըի մէջ կիները պէտքը չեն զգար Շքիկէլէն զգեստ բերելու. հետեւաբար եթէ կը փափաքիք Պաւիթ փեռով և skidosk պուզով կին մը տեսնել, կրնաք շիտակ Գնալըի համար տոմսակ մը առնել:

Արդարացում մըն ալ ստեղծած են իրենք իրենց.

— Այս գեղին աղէկութիւնը այն է որ մարդ սան Ֆասուն կրնայ հագուիլ:

Այսպէս ըսողները միայն անո՛նք են, ո-

որոնք ցուցնելիք գլխարկ կամ շրջազգեստ չունին:

Գնալըի մէջ երկու բան հաղուագիւտ է. — աղուոր արդուզարդեր և ... ծառ:

Բայց, ասոր փոխարէն, Գնալը կղզին կ'արտագրէ ... բանբասանք, որուն առաջին կեդրոնատեղին է:

Հակառակը անբնական պիտի խօսէր, երբ գեղին մէջ մե'նք ենք մեծամասնութիւնը կազմողը, և քանի որ բանբասանքը... «համայնքային» ապրանք մըն է նախ և առաջ:

Գնալըի մէջ գիտեն թէ երէկ ինչ կ'երաք, վաղը ինչ պիտի ուտեք, տիկիներդ երբ յղի մնաց, աղջիկներդ ինչ գոյն շապիկ կը հագնին, որուն երեսը անուշ աչքով նայեցաք և որուն ձեռքը քիչ մը աւելի երկարօրէն սեղմեցիք:

Գնալը կղզին ամուսիններու ... ապահովագրական ընկերութիւնն է, որովհետեւ Գնալըի մէջ շատ դժուար է որ կին մը կարենայ խաբել իր ամուսինը, առանց որ Ֆան-Ֆառով չիմացուի այս բանը:

Այն ամուսինը որ կը փափաքի իր պատիւը ապահովագրել, բաւական է որ երթայ հաստատուել Գնալը կղզին:

Ահա՛ թէ ինչո՞ւ Գնալըի մէջ երբեք ամուսնական գայթակղութիւն մը չի պատահիր: Աստուած չընէ՛, եթէ անանկ բան մը ըլլայ, մինչեւ աշխարհքին միւս ճօթը կ'իմացուի:

Գնալըի է՛ն աղուոր պանդոկն է Օթէլ Շահապը, որուն տէրը Պ. Շահապն է և տիրուհին՝ Տիկին Շահապը:

Պ. Շահապ «քանչելի մարդ մըն է, որ սքանչելի կերակուրներ կ'եփէ և ակնոց կը գործածէ, որովհետեւ կարճատես է:

— Պոչ մարդ մըն ես, Շահապ, ըսի իրեն:

— Կարծեմ շատ պոչ մարդ չեմ, պատասխանեց ակնոցին հետեւէն աչքերովը խնդալով:

Ամէն մարդ Շահապը կը ճանչնայ լոկ իբր պանդոկատէր, իբր խոհարար, իբր հաճելի մարդ, եւ այլն:

Բայց ո՛չ ոք կը կասկածի անոր միւս է՛ն կարեւոր արժանիքին, զոր մեծաբարբառ պիտի յայտարարեմ հոս, —

Պ. Շահապ պարզ պանդոկատէր մը կամ խոհարար մը չէ՛, ո՛չ ալ կը գոհանայ լոկ հաճելի մարդու տիտղոսով, այլ ... բանաստեղծ մը, գրագէտ մը, հեղինակ մըն է ան իր կարգին, ինչպէս Մրմրեանը, ինչպէս Պէրպէրեանը և ինչպէս Փանոսեանը:

Քերթուածներ ունի դրած, որոնք անշուշտ ... խորհրդապաշտ չէ, և գիրք մըն ալ ունի հրատարակած, որուն անունը չեմ գիտեր ...:

Արդ, ասկէ ետքը, երբ ճամբան հանդիպիք Պ. Շահապի, անոր համեմատ բարեւեմէ՛ք:

Բոլոր գրագէտները ամառը Գնալը կ'երթան գիւղագնացութեան, և ասիկա գրական համբաւ մըն ալ կ'աւելցնէ կղզիին անունին:

* * *

Ահա՛ Գնալըն:

Ոչ մէկ աշխարհագրութեան կամ տեղեկագրութեան մէջ պիտի հանդիպիք այս տեսակ տեղեկութեանց:

Բայց, աս ալ ի՞մ աշխարհագրութիւնս է:

Եւ պիտի շարունակե՛մ, եթէ իմ խելքիս փչէ, Տէրը կամենայ և ... Վահան Փափագեան՝ ... ցնծայ:

ԵՐՈՒԱՆԴ ԹՅԱՅԵԱՆ

ԱՌ ԽԱԶՆ

Ո՛րքան դժուար է՛ ինձ գալ աս առանձին. Խաչելութեանդ երկիրպագել սրմագին, Ես որ յաւեհ՝ ի Տան արիդ՝ Անոր (*) հետ, Այցելութիւն չալու գացի մշտաւեհ:

Ծընդագրելով աչքեմ յառած դեպ ի Քեզ, Աղետեւ Ես ինձի համար սրտակեզ, Եւ իւր անմեղ սրտեմ բըղխած աղօթքներ Ո՛վ իսկ կեանաց, ընդունելի մի՛թէ չե՛ր ...:

Նա ապրեցաւ քսանեակ գարուն հազիւ հազ, Անունդ ըսեալ մըմնջելով հանապազ, Յետեմ վայրկեանն անգամ Քեզի փառեցաւ. Լըռիկ մընջիկ ի դաս զուարթնոց սըլացաւ:

Ո հ, չե՛ հընար ա՛լ վիայնակ վերստին Դալ աղօթել հանդեպ Խաչիդ սրբազին, Զի խամրեցաւ կեանքիս ծաղիկ յաւիտեան, Եւ դու ո՛ հաչ, Երեհ՝ ինձ գեթ մի անգամ:

ԱՂՈՆԻՍ

(*) Իմա զվաղամեհիկ որդեակն իմ:

ԱՆՑԱԾ ԴԱՐՑԱԾԸ

[ԼԻԼԱԻ ՕՊՃԵՔԹԻՖԻԿ ԴԻՏՈՒԱԾ]

.
.
.
.

Կոսմոֆոնի լսած էք հարկաւ, սկսել է առաջ խնդրուք մըն է կը լսուի, այնպէս չէ՞, ահա նոյն բանը կը պատահի գրչիս, երբ կը նստիմ արտադրել յօդուած մը, որ եկեղեցիին շուրջ կը դառնայ, չեօրէկ կը հոտի, հաւկիթ կըլմանի, հասկցաք անշուշտ:

Ինձ համար աւելի դիւրին է տըռտըռ գօքանջի մը անդադրում դիտողութիւնները տանիլ ու կրել, քան թէ Զատիկի վրայօք յօդուած մը գրել, երեւակայեցէք որչափ անտանելի բան կրնայ ըլլալ: Նոյն եկեղեցական դիտողութիւնները, նոյն քահանայները, նոյն պնակները, նոյն վիզիթները, նոյն ծախքերը, նոյն կանացի ըսի-ըսաւները, վերջապէս նոյն փատկերներն են՝ որոնք սինէմաթօկոաֆի պէս ի հանդէս կուգան Մեծ Տաղաւարին՝ Զատիկին ըսել կուզեմ, և որոնց վրայ ամեն տարի գրուած է, գրած ենք:

Բայց, ինչպէս, պզտիկ պէպէքը երբ սեղանին առջեւ նստի և գոգնոցը վիզը կապեն, թաթիկները զարնկով՝ մամաի կըսպասէ, քաջ գիտեմ թէ դուք ալ ազնիւ ընթերցողք երբ Հանրագիտակը ձեռք առնէք այս շարթու, ձեր առաջին խօսքը պիտի ըլլայ՝ նայինք Լիլան Զատիկի վրայօք ի՞նչ է գրեր, առանց յիշելու թէ՛ ի՞նչ որ գրած է արդէն կարդացած էք անցեալ տարի, առջի տարին և կամ... ուրիշի մը կողմէ գրուածք մը ձեր նշանած տարիին:

Այլ սակայն ինչպէս մայիսին առտուն անպատճառ կաթ կը խմուի, թաղնիքը՝ լիմօնաթա, շոգենաւը՝ սիմիթ, Հինգշաբթի Ս. Փրկչի գացողը՝ պօղպազ, անանկ ալ Զատիկի շաբթուն Զատիկցու յօդուած մը գրելը զաւեշտագիրի մը պարտքի պարտանոցին կը համարուի (եղէքէնճեանի բարբառով):

Այլ սակայն, որպէս զի համով բերան փոխ

մը հրամցնենք մեր գերազնիւ ընթերցողաց, այս անգամ փոխանակ միակտուր ու միապաղաղ յօդուածի, պիտի առնենք կարեւորագոյն անցքերէն մաս մաս:

ԵԿԵՂԵՑԻՆ

Աշխարք հոն է, ինչպէս կը սիրէ ըսել ռամիկը, թիթիթէմէ ծերուկէն մինչեւ խուցախ մանուկը: Կիները այս տեսակ օրերու կարծես մազերնէն մինչեւ եղունգնին հաւատք կը կտրին, և ոչ մէկ կրօնական արարողութենէ պակաս կը մնան, դուք ըսէք հաւատքի, ես ուղղեմ ցուցամուկութեան երեսէն: Հոս կնիկ, հոն աղջիկ, հոս օրիորդ, հոն տիկին, հոս պառաւ, հոն նորածին, վերջապէս կնկան ծով մը համատարած, որք կազօթեն բազկատարած:

Այրերը թիւով աւելի քիչ են քան կիները, մանաւանդ խթման իրինկունը, կանուխէն Եւայի ներկայացուցիչները եկած դրաւած են վերը վարը Տաճարին ուս ուսի բայց ոչ առանց սիւսի:

Հագուստ, գլխարկ, պօթ, ձեռնոց, ահա կատարեալ բաճուաւա մը, ցուցահանդէս մը, ուր կրնաք գտնել աշխարհիս է՛ն տարօրինակ եւ absurde թուալէթը, ինչպէս նաեւ բնութիւնով է՛ն նալիքը, ընգհանուր վժիտուք մը իբր թէ հաւատացեալներու, որոց մօտ անկեղծ ջրհանկիրը շատ թեթեւ երեւար իր հայհոյութիւններուն մէջ, քանի որ Տաճարը լեցնող կիները թէեւ ձեռքերնին բացած են ազօթքի պատրուակին տակ, սակայն բերաննին ամբողջ լուտանքի, համակ քրիթիքի համար լարած են:

— Երկու աշուրնիդ քէօռնայ քի, միսիւրի սօմախի պէս դէմա կայներ էք տէ, չէք ձգէր կոր քի առջիս տեսնամ...

— Ծամպազները բէրէնտէ չեն նետեր կոր, ֆարագա աղօթք է գիրք է նէ՛ անկաճող պիտի լսէ, աչկդ գործ չունի, կըսէ ուրիշ մը:

— Հիշ օր չէնէ եէմիշի տէլէ շաբաթի հանէ տէ ծառքդ պոնէ...

— Ախպորդ մէրասէն չէր, Աստուած գըլ-խաւորիս էրկար կեանք տայ, վաղը թիւյ մը տահա կեւելցունեմ... տահա...

— Էյ սուս եղէք տէ երկու ծունդ ա-ղօթք ընենք, կը յարեն սւրիշներ:

— Ինծի կուգայ, քի աղւոր տեղերը զապթ էք ըրեր տէ պօլ պօլ կը ջարդէք կոր... եկուր իմ տեղս կայնէ տէ նայէ գօգոթայէն պաշխա պան կը տեսնա՞մ մի...

— Զաթը դուք ժամ տէյի չէ՛, մարդը մեղքը խոթէք տէյի կուգաք... առջիդ նայէ քա աղջիկ, ես քուկին հախէդ կու-գալի՞ ամա, ինչ ֆայտա քի հաղորդուիմ պիտի...

— Ինչ խօռօզ իպիւր ըլլալըդ գիտեմ զա-թը, դուն իս չես ճաշնա՞ր ամա, ես աղէկը գիտեմ, ողորմած հոգի կեսուրըդ խախտէդ սեւ հողերը կրկեց...

— Սուս եղէք ճանըմ, պաշտամուկ կըլ-լայ կոր... կըսէ ուրիշ կին մը, որ զանոնք մտիկ ընելէն չուարելէն ութը անգամ կրկնած էր Հայր մերը:

— Ապուգաթի պէտք չունիմ, դուն մէջ մի մտնար, կայնէ սըւոր պերնին բայը տամ. ան է քի ըսիր նէ ես ալ քեզ ճաշնալըս օռ-թան հանեմ տէ կէօպէկդ չի ճաթի... դուն չէ՛ր քի հորին չուանը քառիօլայիդ կապե-ցիր տէ, գիշերը էրկանըդ քովէն ելար, քէռթէնքէլէի պէս բէնճիրէն ի վար սողա-ցիր իլլէ էքմէքճիրին հետ օյնի ելլաս տէյի... հէ՛... ըսէ նայիմ ինքեար եկուր, հի՛մա կերթամ դրացիներդ կը պերեմ իսպաթ ընել կուտամ...

— Է՛յ ալթըր ի՛յ... պաղնիքին կէօ-պէկը պիլէ չըլուիւր աս խօսքերը, կըսէ ու-րիշ կին մը, որ հոն կեցած ախանջ կտրած էր եղած կոխներուն:

— Ժամ գալ չեղաւ քի, մեղքին պան-եօն մտայ ելայ, Աստուծու երաւըրմին կաս հէմէն տէ քէօռ քիւթիւկ կըլրիս...

Պահաւանին դրանք մեջ.

— Օ՛խ, տֆերիմ քի սէպէպ եղաւ տէ սըտեղը եկայ, ըսելով Տիկին մը հաղիւ տի-տիկ ըրած թէ չէ, ժամկոչը վրայ կը հասնի.

— Աֆ կանէք մանտամաներ, ֆէօս ար-գիլեալ ի...

— Ինչ, սանքի հոս ինէ աղե՞կը պիտի գայ չնթուկի...

— Զի՛, ֆախաթ աղաները ասացին ո՛ւր, ֆէօս կընիյ տի չնստէ...

— Ան աղաներուն ըսէ քի, վախտին իմ աղաս ալ օնիքիլէր էղած է, ես ալ օլտուխ-ճա եաղմաճըլար խալիպ ուստասի՞ն աղ-ջիկն եմ...

— Էօվ ըլլի ըլլի, դուրս տի ելլէք՝ ես վերնատուն տի երթաք...

— Նէ դուրս կելլամ նէ ալ վերնատունը կերթամ, ֆառաղա օյնին տեղը չէնք քի շատ փարայ տուողը առջեւ նստի տէ պան ըսէք.

— Ամա չըլլիր մանտամա... վիէրջէն խօսք կու լսիմ...

— Կայնէ ես աղւոր մը Պատարագը լը-սեմ տէ դուն ետքը ինչ լսես նէ լսէ, ասոր աստեղը ժամ է, աղաներուն սալօնը չէ՛ քի ուղածնուն պէս սըրայի դենն...

Ժամկոչը կը մեկնի չալվարը տատանելէն:

— Աղէկ չըսի՞ քա աղջիկ, ասոնց ասանկ էլլի այախլը, լեզուն պերնին մէջը տառցող կուգէ քի պապանծին...

— Աման քուրուկ աղւոր ըսիր ամա, օտքըս ծառքըս կը տողայ կոր, կըսէ ուրիշ կին մը, իմ պանս չէ...

— Քա ամա չօգ չէյ, ասանկ ալլում օր ըլլալուն պէս օծերու պէս կլոխ կը տնկին կոր... աղա չէ քի ով ըլլայ ըլլայ, հոս տեղի մենծը էրկնաւորն է, ժամն ալ անոր տունն է, ուռուսում ֆիլան չիգայ, ուր կե-նաս նէ կեցիր... կէնճ ըլլալինէ նէ իսէ, տուրսը կը կենամ քի տէլի խանլը մը ճալա-կողտեմ տէ աչկ իքւի խախցունեմ տէյի, ա-մա աս տարիքիս անճախ սըտեղը եկայ ին-կայ...

— Քուրուկ ասանկ մէյ մը էտիդ նայէ, շաբխային թիւոյիւսին դրեր եկեր են, կէօյ-յամ քի Ֆըռըլտախ պախճասին էր մեղա՛յ մեղայ...

— Գործերին ֆըռըլտախ է աղջիկ, դուն գիտես քի աղօթքի՞ համար կուգան տէյի... վայ պաշընայ...

Վերնասունը

— Դա մարիկ ճրպրպրիս ալթըիս ճրպրպրիս սա թապախները, քոռտէլալը ծակ քառսուննոց մը ունէի քի թոռանս ուսկուֆային վրայ պիտի կապէի, ան ալ քաշեցին ծառքէս առին ...

— Սուս, նա սիւրիւ մը տահա կուգան կոր ...

— Թաղիս աղքատաց պնակը անտէս մի առնէ՞ք ...

— Ոտքդ պաղնեմ աղաս, աֆ կնես քսելուս ամա, չիլէ մը թիրէին մէջէն պիլէ կտոր կելլայ կոր տէ պիր տիւզ չի փաթթուիր կոր, աս Ասծուծու աշկին մեռնիմ, քաղուեցաք ու քաղուեցաք, էյ սօնը ... կըսէ տիկինը՝ փոշիէն ճէփ ճերմակ գլխարկը չըտկելով և ետ քաշուելով, որպէս զի անցնին:

— Ի՞նչ ընենք մարիկս, տարին տասերկու ամիս ժամ չէք ի գար, մէկ աս օրին է քի մէկ երկու հոգի կը տեսնանք կոր, գիտնալու էք որ ժամը հալալով չի դառնար, հոս քօնսօլիտ խանը չէ ...

— Հախ ունիս ամա՞, առտանց պէրի է կը դառնաք ու կը դառնաք կոր, պաղնիքի խազնա ըլլար նէ թաշմիշ էղած էր ...

— Աղքատաց ... ըսելով կը մեկնին, մինչ ուրիշ կին մը,

— Ինծի չէյրէկ մը կաւրէ՞ք ...

— Ինչու չէ՞, և չորս ու կէս զրուշ կուտայ ձեռքը ...

— Ա՛ս ինչ է, քսան փարա՞ս...

— Տասը փարա ֆառիս, տասն ալ թապախի ...

— Էյ քաշուելու պան չէ, խաչոր ալթըիս չեմ դիմանար կըսէ կինը, աս զօռովէն սօյմիշ կընէք կոր ...

— Հապա աս թապախը սառաֆի ճամէքեան է քի չէյրէկդ թամամը թամամընա աւրենք պիտի ...

— Արեւը սիրեմ Գարեգին աղայիս, մեր էքմէքճին է ամա, քանի մանրուք ուզեմ նէ կուտայ, դուք ալ թաղական աղա պիտի ըլլաք, տասը փարային իրթիքեապ կընէք կոր ... աշկ օլսուն ...

Ուրիշ անկիւն մը

— Հաւատացէք օրիորդ ֆիւռէօն կընէք կոր ... դուք աս հաղուստով Բերա Երրորդ դուրեման եկեղեցին երթալու էիք ... հո՞ս ո՞վ կայ, ո՞վ կը տեսնայ որ ... կըսէ բարեկամուհի մը, աչքովը վերէն վար զննելով:

— Իրաւունք ունիս հոգիս, բայց քիչ մը մէջքս կարճ է ըրէր կարծեմ ... նայէ՞ ...

— Ձեմ կարծեր, սանկ քիչ մը առաջ քալեցէք տեսնամ ...

Օրիորդը տեղէն կելլայ և կսկսի կոտորուելով քալել:

— Ձէ՛, չէ՛, սիրտերնիդ մի կոտրէք, հանգիստ եղէք, բան մըն ալ չունի, շատ ձեւաւոր, Ժիւրօնի՞դ ... տեսնամ, քաճքա է կարծեմ ...

— Այո՛, ըսելով բէշը վեր կառնէ ու մօտը նստող ճատալօզ մը,

— Տահա բան կայ նէ ըրէք, հանուեցէք քա, պաղնիքն ենք, հանուեցէք, քրքրեցէք տէ, չըխմա մը ըրէք ...

— Ինչո՞ւ, ձեզի հետ խնդիր մը չունինք կարծեմ ...

— Աղէկ որ երկու լախըռտը սովորեք էք, վայնի վրանի՞դ ... չէքի ատանկ սիւսէր, վառախլանմիշ ըլլաք տէ չարչի բազար պօյ ցըցելու ըլլաք նէ, սանկ մը նայող չիղայ, հոգեբնիդ մընէք սանքի ...

— Տէր ողորմեա՛յ ինձ Աստուած ... կըսէ օրիորդը սրանեղած:

— Մէյէր չախ մը դրի քի, պապանծելիք պերանդը բացիր տէ Ասծուծու անունը թէքրար ըրիր, չէնէ որ սահաթ է եկէր կայնէր էք, սիւսէն ֆիստանէն շարխայէն պաշխա լախըռտը մը չի լսեցի ...

Ձեմ գիտեր թէ, հաւատքը, պատշաճութիւնը և Աստուածաբանութիւնը կանանց մէջ հո՞րք պիտի արմատանայ հիմնովին, այս օրինակ խօսակցութիւնները որոնք իրականութիւն են, միշտ կանցնին, կը կրկնուին մանաւանդ եկեղեցիներու մէջ, մինչդեռ մենք էրիկամարդիկս այն կեղծ հաւատքը ունինք թէ՛ կրնեք իրենց ջերմեանդ աղօթքով և եկեղեցասիրութեամբ մենէ շատ ու շատ բարձր են և Աստուծու մօտ, blague!

ՎԻՋԻԹԱՃԻՆԵՐԸ .

Կը մեղքնամ շիտակը, կը կարեկցիմ ի տես զուրքի հագուած վիզիթածի մը, որ բնականէն չեղում մը ըրած Զատկի առթիւ, բարձր օծիկը վիզը, և սեղմ պոթերը ոտքը, մէկ ձեռքը թաշկինակ, որով մէյմը ճակտին քրտինքները և մէյ մ'ալ ոտքին փոշիները վար կուտայ կրկնելով փողոցները, գեղերը, արուարձանները, որպէս զի ի ձայն փողոյ (որ թարգմանի բարայի) աւետէ գիտցողն երուն թէ Քրիստոս յարեալ ի մեռելոց ... : Եւ ահա այս լուրը տալու համար մեքենական տանջանքներու կը մասնէ ինքզինքը, ոտքերը, քսակը, նա մանաւանդ ստամոքսը, որ մինչեւ չնջափողը կուգայ ըսելու՝ պին պիր չէշիտին մաղաղան, դարձայ, ալ չեմ կրնար ընդունիլ ... :

Եւ սակայն նորէն տասնըորս տեղ ունի գտըտելու վիզիթածին : Զատկի վիզիթածի մը գլխաւոր խոսակցութեան դրամագլուխներն են, օգերու փոփոխութիւնը, եկեղեցւոյ բազմութիւնը, գիշերները քունները առնուշաւը, թախթա պիթի բիրէ սիվրիսինէկ չըլլալուն համար : Բայց այս իրական և գըլխաւոր նիւթերը մէկ երկու յաւելումներ կուտենան, Սկիւտարի մէջ, ուր փոշիին վրայ կը խօսուի, Մագրի-գիւղ՝ թռչնին քօնտիւք-թէօններուն անկրթութեան վրայօք, Բերա՝ օգափոխութեան, Փատը-գիւղ՝ եկեղեցւոյն պզտիկ ըլլալէն ժողովուրդին կրած նեղութեան վրայօք և ելնի-գաբու՝ ... մառուտներուն կէօպէկէնմիշ ըլլալուն առթիւ : Բայց սովորաբար տեսէք թէ չիչէի պուռնունսա վիզիթածի մը ինչպէս կուգայ, ինչ կը խօսի և ինչպէս դուրս կելլայ տունէն :

— Զա՛թ, չա՛թ :

— Զըզըռա գըշ...դ ... :

Մինչ վարը վիզիթածին, կըճըռը պիւքմէ բառաբան հանելով կգրաղի, վերը տիկինը կամ օրորդներն ալ գուռու գուգու քէստանէն՝ որ Զատկական Ֆուռի կլասէն կը սեպուի, գողերնուն վայրկենաբար կը կըլլեն չի ծամած, ու վիզիթածին՝ կըռչ կըռչ վեր կելլայ, ձեռքովը՝ վեր թռած փողկապը շտկելով, 24րդ անգամը ըլլալով :

— Քրիստոս յարեալ ի մեռելոց, (իրա՛ւ

կըսես, աղէկ որ եկար, չէնէ ուրկէ պիտի իմանայինք ...) :

— Օրհնեալ է յարութիւն Քրիստոսի ...

Ամէն ոք հակափորը տեղ մը իլիշտիրմիշ կընէ և ձեռքերը սապօնուելու պէս կը չըփուին՝ խօսք գտնալու ձեւ մը, որ բանաստեղծները մաղերնին քաշելով կը գտնան :

— Օգերը բացուեցան ալ ... բայց իրիկունները քիչ մը սէրին կընէ կոր ...

— Այո՛ ...

— Այս ձմեռ ինչպէս անցուցիք նայինք...

— Էհ, իչտէ սանկ նանկ ...

— Եկեղեցի գացիք հարկաւ ... ինչպէս աղուոր եղա՛ւ ... (Իբր թէ կատարուածը դպրոցական կամ թատերական հանդէս մը ըլլար ...) :

— Շատ աղուոր ... կըսէ տիկինը, աչքին պոչովը հրամայելով բերիլ աւանդական լիֆթօնը, որ անպատճառ քաֆաօ կըլլայ :

— Շատ տարիներո՛ւ, (եթէ տանը մէջ ո՛ր եւ է Արթին մը կայ՝ մաղթանքներ) :

— Շօքօլա մը չառնէ՛ք ...

— Շնորհակալ եմ, արդէն շատ կերայ, կըսէ վիզիթածին, մինչ մտքէն, «եաղին մէջը երկու հաւկիթ եփէքնէ շատ մախպուլի կանցնէր, չիւնքիւ առտուն մէկ խախվէով սօխախ ձգեցին իս ...»

— Աս տարի օգափոխութեան պիտի երթա՞ք ...

— Քթիրիոս աշան գիտէ ...

— Գիշերներն ալ չի նստուիր կոր ... շիտակը, քունները բէք անուշցան ...

— Այո՛ ... :

Այս միջոցին վիզիթածի աղան, խմած տեսակ տեսակ ալքօյներէն անանկ կըռք մը կընէ որ՝ խթումին գիշերուան միտեան և բասքրման իրարու ետեւէ վեր կուգան, և թէեւ բերանը կը գոցէ, բայց կազէօզի պէս քիթէն դուրս կը պոռթկան և տիկինին զգալուն ռնգունքը կը զգան այդ :

— Զանըմ աս ժամուն թապախները ...

վերջը չեն բերեր կոր ...

— Անտանելի բան շիտակը ...

Շը՛կ ... կըռթ մըն ալ, և այս անգամ բիւսկիւրմէլի տեսակէն ... :

Վիզիթածին ժամացոյցը կը նայի և՛

— Օ՛... , ինծի ներողութիւն ...

— Կերթա՞ք ... կրսէ տիկինը շեշտով մը, որ կոտորուելէ աւելի ուրախութեան ինչ մը ունի իր մէջ, որովհետեւ գուզու քէստանէսին պիտի մաքրէ ակռաներուն մէջէն, որոնցմէ անհանգիստ է ...

— Մնաք բարով, բարեւներս քթիբիոս աղային ...

— Մեռսի, դուք ալ բարեւ խօսեցէք տունը ...

— Գլխուս վրայ:

Եւ ահա, նոյն մարդուկը նասըրին ցաւէն աչքերը դուրս ձգելով՝ ուրիշ տուն մը կերթայ ձեռք առնել, և ainsi de suite:

* * *

Ու հիմա աչքիս դէմէն սինէմաթոկոաֆի թապլօններուն պէս յաջորդաբար կանցնին ամէն անոնք՝ որոնք Ձատիկ ըրին, բառին 140,000 քիլօնոց իմաստովը: Հոն հիւանդ մ'է որ թրթռիկ չաքէթով պտըտկելուն համար՝ ոտքերուն և կռնակին հառտալ կը պտըտցնեն, անդին օրիորդ մը կայ, ան ալ վերմակին տակ քաշուած, բարակ մուսուլին հագուստին հետեւանօք, ուրիշ տեղ մը ընտանիքի հայր մ'է, որ սեղմ կոշիկ հագնելէն նասըրը խախտած ըլլալով՝ ոտքի վրայ չի կրնար կայնիլ, տուն մ'ալ կին մը կայ, որ եկեղեցւոյն մէջ կռիւ ըրած ըլլալուն համար չաբաթ մը եւս ապաշխարանքի պէտք ունի, ուրիշ տուն մը վիդիթաճի մըն է, որ օրը վեց քաշէ քառաօնաք կը կլլէ և նորէն ստամոքսը չի հանդարտիր, վերջապէս ինչպէս ամէն առթիւ, միմիայն քահանաներն են՝ որոնք իրենց տան անկիւնը քաշուած, Ձատկին պըտուղը կը քաղեն, ոչ թէ Սաղմոսերգութեամբ՝ ալ ուրիշով, գինիով, հոգոցն մեր ննջեցելոց. ամէն:

ԼԻԼԱ

ԿԱՐԵՒՈՐ

Ի գիտութիւն մեր արտասահմանի Պատ. Բաժանորդաց, անգամ մ'ընդ միշտ կուգանք յայտարարել թէ, տարեկան բաժնեգինները փոխանակ 12ի՝ 14 Ֆր.ի բարձրացուցած ենք ակամայ, նկատելով որ մէկ թերթը տասը փարայի կը զրկուի բօթայով և որ 13 զրշ. կը բռնէ 52 թիւի համար:

ՍԱՐԵՏՈՒԿՆԵՐ

ԳԵՐԵՉՄԱՆԱՔԱՐԵՐՈՒ ՇՈՒՐՋԸ

ՔԱՐԵՐԸ ԿԸ ԽՕՍԻՆ

Ո՛վ դուք, որ քանի մը էջ անդին խնդացիք, հարկաւ պիտի չմեղադրէք այս տղերքը գրողը, որ ձեզի տխուր միջավայրի մը մէջ կ'առաջնորդէ ու մեռելի վրայ կը խօսի ...

* * *

Աս մեռելոցին ներս մտայ Պալլադիի գերեզմանոցէն:

Մեռելաստանին համայնապատկերը պարզուեցաւ աչքերուս ու մտածեցի թէ՝ տապա նաքարերու շուրջը ընկիւք սլքտումներս մինչեւ վեր պիտի հասնի, հո՛ն, ուր կաւարտի ալ՝ հոգիներու այդ քարէ բնակարանները:

Ծա՛յր տուի սլքտումներուս դէմս պառկող քարով, աչքերս վրան յարեցի ու քարը տեսէք ինչ կրսէ ինծի:

Դու որ կը կարդաս այս քապանագիր

Մի մոռնար հանել ինձ մէկ ողորմիս,

Օր մ'ալ ինձ նման քոյդ քապանագիր՝

Պիտի զայն խնդրէ, երբ հոս ամփոփուիս:

Ու հարկադրուած՝ ողորմիս մը կը թըռցընեմ շրթներէս ու կանցնիմ ուրիշ քարի մը առջեւ՝ անոր ճիշդ ճակատը կարդալու սա տողը:

Մարդոյ որպէս խոցոյ են աւուրք իւր ...

Բայց ճիշդ է, անանկ չէ, ու աս ճըշմարտութիւնը ամէն տեղ արձագանգ գըտած է, գիրքերու մէջ, կղերականներու բերանը, սակայն հո՛ս այդ խօսքը խորհրդաւոր է, հո՛ս՝ սա՝ գերեզմանին ճակատը:

Սա քարը, կարծես վերի տողը կը լրացնէ ու կ'աւելցնէ:

Արշալուսոյ հետ վերջալոյս

Եհովայի վճիռն է այս...

Ահա ուրիշ մը, որ կարծես թէ յաւիտեանական կեանքը կը հեգնէ:

Բայց ո՞վ կրսէ թէ մահ չկայ...

Ո՛վ բանաստեղծներ, քա քարը միասին մօտիկ ընենք:

Ի փթձելն թառամեցաւ իրեւ ծաղիկ

Անմեղ հոգւոյն պահարան՝ մարմինն փափկիկ:

Բաւական հեռու ասոնցմէ, փոքրիկ գե-
րեղմանաքար մը կայ, որ մէկուկէս տարու
մանուկ մը կը ճնշէ՝ սա արձանագրութիւնով.

Վա՛րդ էր

Ապրեցաւ վարդերու նման
Առաւօս մը միայն...

Սա քարին տակինն ալ կ'սպասէ՝ ու կըս-
պասէ՝, բայց ինչ բանի կ'սպասէ, թող ինք
խօսի որ հասկնանք.

Եւ սպասեմ անեղ գոչման
Դարիէլեան փողոյն հնչման

Ու դե՛ռ պիտի սպասէ:

Իսկ սա քարը, քեզի տես ինչե՛ր կըսէ
ունայնութիւնը երգելէ առաջ:

Ո՛վ կծծիներ, մտիկ ըրէք, կծծի մը
տապանագիրն է որ կը խօսի.

Այս աշխարհի մէջ ես ունէի
Տուն տեղ ու գործ, կին ու զաւակ,
Այլ ամէնէն շատ սիրեցի
Եւ պաշտեցի միայն ստակ.
Սիրեցի զայն կեանքէս ալ շատ,
Անձիս անգամ խնայեցի,
Ծախք ըլլալէն ես վախցայ շատ՝
Բայց աւա՛ղ զայն հոս թողուցի:
Օրինա՛կ առ ով այցելու՝
Եւ մը՝ ըլլար ինձ պէս կծծի.
Տէրոջ պարգեւն վայելէ դու,
Դեռ չի թողած այս սուտ աշխարհ,
Այլ մի մոռնար օրհնել զԱստուած,
Մի՛ վստահիր այս աշխարհի,
Ունայնութիւն ունայնութեանց
Շիրմիս մէջէն կրկնեմ քեզի:

Իսկ թօնա՞ծ տապանագիր մը չէ՞ սա բա-
նաստեղծինը.

Հասակ Ուղղաբերձ,
Դիմօք զուարթուն,
Լեզուով գերապանծ
Մօք իմաստուն.
Տաղս յօրինեաց
[Տողիւ փաղփաղուն
Կոմիտաս արգոյ՝
Բանաստեղծ ներհուն:

Հասկցա՛ք պուէտ Կոմիտասին փառաւոր
կերպարանք մը ու ճարտար գրիչ մը ունե-
նալը:

Իսկ սրտեղը երկու քարեր կան քովէ
քով, մէկը Մարիանէ մայրապետի Գրիգորե-
ան, միւսը Անթուամ մայրապետի, ան ալ
Գրիգորեան: Ու երկուքին ալ վրայ սա՛
արձանագրութիւնը.

«Բրիտանական հաւատով եօթանասնամեայ ե-
ղաւ ընդ հողով»:

Տարօրինակը հոն է որ այս երկու քայ-

րերը, եօթանասուն տարեկան հասակնուն
հող են մտեր եւ երկու քարին թուականներն
ալ միեւնոյնն են:

Ու քիչ մըն ալ սլքտալէ ետքը երբ դուրս
ելլալ կը պատրաստուէի, դռանը մօտերը քա-
հանայ մը ու երկու հոգի կը տեսակցէին, կե-
ցայ ու զիտեցի. մարդոցմէն մէկը դրամ մը
դրաւ քահանային ափը, քահանան մեկնե-
ցաւ:

— Աղբար նէ՛ իչին վէրտին կըսէ ընկերը.

— Բանէթլիի օգուտտում պաշկա բա-
բազա, չիմտի պուէտ տա գըրմագ օլմագ,
գաթը բահմէթլի սեմիթ սիր ֆի բաբը սաղը-
սըն պեցիմ իչիմ...

* * *

Հանգստաքարին մօտէն անցնելու պահուս
կը կենամ, կամ աւելի ճիշդը բան մը զիս
կը կեցնէ. Հանգստաքարին վրայ, բայց դա-
գաղի մը մէջ, տասներկու տարեկան տղայ
մը կը ննջէ...

Այո՛, կը քնանայ, բայց ինչո՞ւ դագաղի
մէջ դրեր են, ուրեմն մեռա՛ծ է, բայց ին-
ծի անանկ կուգայ որ կը քնանայ ա՛ն ա-
նո՛ւշ քունով մը...

Կաս կարմիր փողկապը, խելօքիկ դէմ-
քին տօգունութիւնը կարմիրի պիտի փոխէ
կարծես, ու կիսափակ աչքերը պիտի բաց-
ուին ու դագաղէն դուրս պիտի ելլայ. բայց
մեռած չէ՛ ան, այլ կը քնանայ...

Մէկը կը մօտենայ դագաղին. Տեսարանը
ա՛յնքան ախուր է եւ մարդը ա՛յնքան աղ-
դուած, որ գլուխը կը բանայ ու կը խա-
չակնքէ...

Կը յիշեմ այն ատեն կարդացած տապա-
նագիրներէս.

«Բայց ո՛վ կրտէ քե մահ չկայ...»: «Մար-
դոյ որպէս խոտոյ եմ աւուրբ իւր»: «Արեա-
լուտոյ հետ վերջալոյս, եհովայի վեհ՛ուն ե
այս...»: «Վա՛րդ եր, ապրեցաւ վարդերու
նման՝ առաւօ՛ս մը միայն...»:

Ու, հանգստաքարին վրայ, ձեռքը ձեռ-
քին վրայ՝ տարածեալ այդ անչնչացեալ տը-
ղուն հանդարտ դէմքը անգա՛մ մըն ալ դի-
տելէ ետքը, դուրս կելլամ մեռելներու այդ
աշխարհէն՝ երեւակայութեան մէջ դեռատի
տղուն պատկերով, ու կը մըմռամակռաներա
սեղմած...

Ի փնթեղն թառամեցաւ իբրեւ ծաղիկ
Անմեղ հողոյն պահարան՝ մարմինն փափկիկ:

Անմեռուկ՝ Վ. ԳՐԸԲՅԱՆ

ԿԱՆԱՑԻ ՔՄԱՅԱՃՈՅՔ

[ՖԱՆԹԻԶԻ]

Ամեն անգամ երբ անցնէի այն պալատին շահէն ցած ,
Բիշ մը պշտոս քիչ մըն ալ թոյլ նա պատուհանն եր նստած ,
Ու ժպտելով վառ աչուկներն կը յառէր ինձ սիրօրէն ,
Ես այդ պահուն կ'զգայի զիս երջանիկըն ամենէն :

Ես այդ պահուն կ'զգայի զիս երջանիկըն ամենէն ,
Զի կարծէի թէ այդ հուրին կը սիրէ զիս խելօրէն ,
Ու միամիտ , խենդ պատանի , եղած էի իր գերին ,
Բայց չգիտցաւ զնահասել նա վեհութիւնն իմ սերին :

Ան չգիտցաւ զնահասել անհունութիւնն իմ սերին ,
Ու ետ ուզեց ինձի դրկած սեւ փնչիկը գանգուրին ,
Իմին հաւույս միտ կծկուած մնալ ուխտեց իր շրթներ ,
Պարապ տեղը ա'լ անկէ վերջ կը մուրայի իրմէ սեր :

Պարապ տեղըն ա'լ անկէ վերջ կը մուրայի իրմէ սեր ,
Խնդրանքներուս , պահանջներուս , միտ անխիղճը յամառ եր ,
Սիրոյ հրճուանք , սիրոյ ժամեր ամենքն ալ արդ աւա'ղ ,
Ազատօրէն կը վայելէր Մուշուի մը հետ սառախ :

Ճիւղի , մամա , սանկ աղւորիկ պէպէք մըն ալ ... սուսանէ ,
Առնեն քեզի բայց Միւսը՝ գոհար արեղ դուրս վանէ՝ ,
Գթա՝ վրաս , մի՛ լիւր զիս , պաղտեցայ անգութին ,
Բայց անիկա միտ հախրնսրեց հայիս զիւպպէ՝ անկուտին :

Վնոտ քօնով — « Ասկէ վեռջը՝ քեզի սիրել չեմ կոնառ ,
« Ժանըն , ըսաւ . ժպիտ , նայուածք , դեռ աւելին սիրոյ բառ ,
« Ուրիշին եով գնա՝ գտիւ , կը հասկնա'ս , բառեկամ ,
« Զամառիս ոռ , տաս ձանձուացայ սա՛ մեռ սեռէն խիտ անհամ :

« Թե՛ հասակով , թե՛ տառիքով ա'լ կառնեմ թէ ես մեծցայ ,
« Ու քեռես կառգուելու համառ ինձ տան , ջոջ աղա ,
« Գիտցած եղիւ , մեռին միջեւ , լմնցաւ հա՛ ամեն ինչ ,
« Զիւնին , մաման ուրիշին տուռ , քեզմէ կ'ուզեմ ես ոչինչ » :

* * *

Հիմա լուած փոյր-հոգիես , մերք կը խնդամ մերք կու լամ ,
Ու երբ դարձեալ զինքն յիշելով երթամ պալատն տաս անգամ ,
Ներս կը փառուի եւ պատեցի իր դեմքին տեղ հոգեհմայ ,
Կը դնէ կատուն , ինք ալ ներսէն լեղի լեղի կը խնդայ ... :

Վ.Ա.ՀՐԱՄ ՍԵՎԱԶԵԱՆ

ՇԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

ՊՈՅԱՅԻ ԳԻՒԴ. — Հոս եկեղեցական հաւատքը, կրօնական սէրը ծայր աստիճանին հասած է: Բարեպաշտունի մը պարզ ժամագիրքի մը նուէրը՝ տեղւոյս քահանային կողմէ շունդալից ծանուցուեցաւ՝ իբր 120 շաբաթ արժէքաւոր նուիրատուութիւն: (Կերեւայ թէ՛ յիշեալ քահանան կեանքին մէջը նուէր բառը ոչ տեսեր ոչ ալ ընդուներ է Մ. Խ.):

ԲԵՐԱ. — Խթման իրիկունը դեռատի կին մը, ծոծ ըլլալուն մարեցաւ... կարգ մը միւսիւններու թելերուն մէջ, որոնց առաջին գործը եղաւ՝ բուրումնաւէտ քօսէն քակել երեսին ջուր դարնելէ առաջ: (Բաղդաւոր տղաք. Մ. Խ.):

ՆՈՅՆ. — Կիրակի իրիկուն, մեր շուտիկ քրոնիկագիրը՝ Ե. Թօլեան, իր Տիւլսինէին հետ ոչ անձնական կառքով այլ հանրական քով բէռքաթի ընելուն հետեւանօք՝ հարբուի ըլլալը կիմանաք: (Կարծեմ թէ զիս տեսնելուդ՝ արեւմուտք դարձողը հրամանքդ էիր. քիթդ ի վեր պաղ ջուր քաշէ բարեկամս. Մ. Լ.):

ՍԿԻՒՏԱՐ. — Նոր թաղի վերնատունը հինգշաբթի գիշեր, աղէկ զաւկի տէր մօր մը բէշին պիւլիւի չըխըն մը կարեր են, եւ զոյցի մը նայելով՝ տղան այդ օրէն ի վեր բարակը բռներ է:

ՆՈՅՆ. — Չատկին երեք օրը Ալէմ տաղի անցնելու համար հող գացողներուն եւ ցուրտէն դողդալով դարցողներուն համար Տէր ողորմեայ կը խնդրուի: (Ս. Փրկչի մատուռը դիմեցէք. Մ. Խ.):

ԱՏԱԲԱՋԱՐ. — «Հանրագիտակ»ի նախորդ գործակալ՝ հոչակաւոր Կարապետ Պուրմանի հաշիւը անգամ մ'ընդ միշտ մաքրելու համար, մասնաւոր ծանուցումով մը Չատկին առտուն պնակ չըջադայեցին եւ հասոյթը եղաւ... (Վազ անցայ, չեմ ուզեր մի՛ տաք՝ որպէս զի չարունակ գրեմ տա՛ք տա՛ք. Մ. Լ.):

ԳՈՒՄ ԳԱՔՈՒ. — Անցեալ իրիկուն, Հիւար տիպի երկայնքը, գաւազանը ճօճե-

լով եւ կոշիկներուն ճըռթ ճըռթին հետ à tempo պտտկող չիք միւսիւ մը, երբ անցնող օրիորդի մը դարպաս կընէր, յանկարծ ոտքը քարին գալով՝ «Երկրպագեմ քեզ կոյս Մարիամ»ը կրկնեց փառաւորապէս:

ՄԱԳՐԻ ԳԻՒԴ. — Թէեւ մենք ալ եռաձայն խումբ մը կազմելու դիտաւորութիւն ունէ՛նք, բայց գտնուող վարպետները զմեզ չկրնա՛յո՛ւ գոհացնել, որոշեցինք եանգի-եանգէն մէկը բերել, հասկնելու համար թէ՛ մենք պաշխա մարդիկ ենք: (Սոխը քանի՞ կուտան կոր. Մ. Խ.):

ՂԱԼԱԹԻԱ. — Նկատելով որ ուրիշ տեղեր ալ եռաձայն կամ քառաձայն խումբեր կազմուելովը մեր շահու աղբիւրը երթալով կը նուազի, որոշեցինք երկսեռի վերածել մեր խումբը, սա արդար իրաւամբ թէ՛ մենք առաջինն էինք, պէտք է առաջնա-կարգը մնանք:

ՍՐԱՄԻՏ ԶԲՕՍԱՆՔ

ԹԻԻ 5

Այս անգամ սրամիտ ընթերցողներս ձեզ տեսնամ, աշխատեցէ՛ք կազմել նախադասութիւն մը՝ որ իր մէջ բառեր չի պարունակէ: Այսինքն գտէք նախադասութիւն մը որ բառերով կազմուած չըլլայ:

Զըլլալիք բան է մի, ըսէք, փորձեցէ՛ք: Նիկումիդիա Ա. Ս. Զ.

Սոյն սրամիտ զբօսանքը մինչեւ տասն եւ հինգ օր ձիշդ լուծողը վիճակաւ պիտի ստանայ փիւրեղեայ ծաղկաման մը Պազառ Ալմանէն գնուած:

Արտօմսկի ԱՐՄԻՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐ. Ե. ԱՍՏՏՈՒՐԵԱՆ

Պապր-Ալի Գասէսի քիւ 52.

ՄԵԾ Գ ԱՃԱՌ-ԱՏՈՒՆ

ԼԱՅՆՈՍԲԵՆՈՎՆԱԾ

Արանց, Կանանց եւ Տղայոց
ՊԼՏՐԱՍՏ ԵՒ ԶԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ եւ Ընկ.

Գ. Պոլիս, Սուրբան Համաւ, Թոփալեան խան
Սոյն վաճառատունը, որ տարիներէ
ի վեր իր ուղղութեամբ, ապրանաց
տոկունութեամբ և գիներու անմրցելի
աժանութեամբը շահած է բոլոր իրեն
գիմող յաճախորդաց վստահութիւնը,
այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր
հագուստներու, կանանց խոլոփներու
և տղայոց շիք և դիմացկուն փոփոխ-
ներու ճոխ միջերք մը պատրաստ ունի,
որ շերմապէս կը յանձնարարուի ամէն
անոնց, որոնք պէտք ունին ներկայ
եղանակին հագուստի և ուրիշ նմանո-
րինակ պիտոյից:

Ոսկարկութիւն չկայ, թիւը 2 շրջ. է:
Գաւառներէն յանձնարարութիւնը
փութով կը կատարուին, 50 — 30



ԱՌԻԹԵՆ

ՕԳՏՈՒԵՑԷՔ

ՊՓՈՒԹԱՑԷՔ ԳՆԵԼ

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ

Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆԷ

Ճեղք պէյ, խանիկ
սակ

Թէյի մեծ վաճառատան թէյերը,
որք ուղղակի ներածուելով Սեյլանէ,
Չինաստանէ, Հնդկաստանէ, Ճապոնէ եւ Ճա-
բոնէ:

Ամենէն դժուարահաճներն իսկ կըր-
նան գոհանալ թէյերու թարմութեամբ
հոտովն ու համովը:

Փնտռեցէք մանաւանդ իրենց յա-
տուկ խառնուրդները, որք կը ծախ-
ուին մեծ և փոքր քանակութեամբ:

Ուշադրութիւն մարտային:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԾԱԲԱԹԱԹԵՐԹ

16 ՄԵԾԱԴԻՐ ԷԶԵՐՈՎ ԵՒ ՃՈՒ ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ ՀԱՄԵՍՈՒԱԾ

Կ. Պոլսոյ համար տարեկան բաժնեգին	50 դր.	Վեցամսեայ	25 դր.
Գաւառաց համար	»	»	27 »
Արսասանման	»	»	6 Ֆր.

Կ Ա Ն Ի Ի Կ

ՀԱՍՑԷ՝

ՎԱՀԱՆ ՓԱՓԱՋԱՆ, Պապը-Ալի հասկսի Ասատուրեան տպարան քիւ 52.]

Գաւառներու մէջ գործակալներ կը փնտռուի, պայմանաւ որ երաշխաւորվը ցոյց տան
թէ միշտ նոր բաժանորդներու անունին և հասցէին կցեն նաեւ բաժնեգինները:

Դրամները պէտք է դրկուին կամ Օսմ. Մանտաքութով և կամ բոսթայի փութով 20 հոտը
20 դրուշի հաշուով:

ԳԱՌՆԻԿ ՔԷԾԻՇԵԱՆ

ՆՈՐ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Կ. Պոլիս Հանո-Բուլօ խան իբր 2

Նախ փորձառուները, յետոյ խաբ-
ուողները միայն գիտեն էթ ո՛րչափ
դժուար է, դժնել ու գնել ապրանք-
ներ՝ որոնք թէ տոկուն ըլլան՝ թէ ճա-
շակաւոր և թէ . . . աժան :

Գառնիկ Գէշիշեան վաճառատունը
թօհաֆիէի էն առաջնակարգ Եւրոպա-
կան գործարաններէն բերել տուած է
տեսակ տեսակ կանանց և արանց յա-
տուկ Ֆանելաներ, գուլպաներ, քաւիկնակ-
ներ, ձեռնոցներ, փողկապներ, բրդեղեններ,
Ֆիլիֆօս և խիստ ճաշակաւոր ներգնաւապիկ-
ներ, գլխու շարքեր, քաւ ֆոսէներ ևլն. ևլն. :

Ջերմապէս կը յանձրարենք անգամ
մը այցելել այդ վաճառատունը, ուրկէ
անպատճառ գոհ մնացողներ միշտ հոն
գիմելով պիտի հաստատեն թէ՛ գինե-
րու աժանութեան, Տեսակի ազնուութեան և
ապրանք՝ տկունութեան երեք առաւե-
լութիւնները ուրիշ ո՛ր և է տեղ կարելի
չէ գտնել :